ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հուլիսի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-327-8.06.2018-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 928 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-327-8.06.2018-ՊԻՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է գործի քննության ընթացքում պատասխանողի կողմից հայցապահանջները կամավոր կատարվելու հետևանքով գործի վարույթը կարճվելու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածով կամ 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարի չափը փաստացի հաշվարկել պատասխանողի կողմից հայցապահանջն ամբողջությամբ կատարվելու օրվա դրությամբ, և այդ պահից սկսած մինչև դատարանի վճիռ կայացնելը պատասխանողի նկատմամբ որևէ տույժ կամ տուգանք չհաշվարկել:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ օրենքի նախագծով առաջարկվող կարգավորման անհրաժեշտությունը բացակայում է՝ հաշվի առնելով ստորև ներկայացված հանգամանքները՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը, միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դատարանը դատական ծախսերի հատուցման պարտականությունը դնում է պատասխանողի վրա միայն գործի քննության ընթացքում պատասխանողի կողմից հայցապահանջները կամավոր կատարվելու հետևանքով գործի վարույթը կարճվելու դեպքում, ուստի, ենթադրվում է, որ դատարանը գործի վարույթը կարճելու հետևանքով դատական ծախսերի հատուցման պարտականությունը դնում է պատասխանողի վրա այն պատճառով, որ վերջինս պատշաճ կատարել է իր պարտավորությունը, ինչի արդյունքում այն (պարտավորությունը) դադարել է: Այս

համատեքստում անդրադառնանք նախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 369-րդ, այնուհետև 411-րդ հոդվածներով նախատեսված կարգավորումներին: Այսպես, գտնում ենք, որ, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասում ներկայացված է տուժանքի (տուգանք, տույժ) հասկացությունը՝ որպես պարտավորության կատարման ապահովման եղանակ, ըստ որի տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում, որից բխում է, որ տուժանքը, ինչպես և պարտավորության կատարման ապահովման ցանկացած միջոց, իրենից ներկայացնում է արդեն իսկ գոյություն ունեցող պարտավորական հարաբերության լրացում, որի հետևանքով էլ այն (տուժանքը) առանց իրենով ապահովվող պարտավորության գոյություն ունենալ չի կարող, այսինքն՝ գլխավոր պարտավորության դադարումը դադարեցնում է նաև լրացուցիչ պարտավորությունը (բացառությամբ՝ երաշխիքի): Ուստի, եթե դատարանը գործի վարույթը կարճելու հետևանքով դատական ծախսերի հատուցման պարտականությունը դնում է պատասխանողի վրա այն պատճառով, որ վերջինս պատշաճ կատարել է իր պարտավորությունը (ինչի արդյունքում այն (պարտավորությունը) դադարել է), և այդ պահից դադարել է նաև լրացուցիչ պարտավորությունը՝ մասնավորապես հաշվարկված տուժանքի (տուգանք, տույժ) վճարումը, ապա այս պարագայում բացառվում է պատասխանողի վրա տուժանքի (տուգանք, տույժ) հաշվեգրումը պարտավորության դադարման պահից մինչև դատական ակտի կայացումը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ, որոնք հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ

համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների: Նշվածից հետևում է, որ այս դեպքում ևս, տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը, և բացառվում է տոկոսների հաշվեգրումը պարտավորության դադարման պահից մինչև դատական ակտի կայացումը:

2. Օրենքի նախագծի հիմնավորման մեջ նշված Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2013 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից պետական տուրքի գանձման դատական պրակտիկայի մասին» N 129 որոշման 21-րդ կետով նախատեսված կարգավորումը չի կարող պատասխանողի համար բացասական հետևանքներ ունենալ արդեն իսկ կատարված և նշված հիմնավորմամբ կատարման արդյունքում դադարած պարտավորության պարագայում:

Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանում և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում քաղաքացիական գործերով դատավարության իրականացման կարգը, իսկ օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածով նախատեսված տուժանքների (տուգանք, տույժ) կամ 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվարկման կարգին (այսինքն՝ ունի նյութա-իրավական, և ոչ դատավարական բնույթ), ուստի, նշված լրացումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորման առարկան չէ:

Ամփոփելով շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծով քննարկվող օրենսգրքի գործող հոդվածը թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2018 թվականի N 928 - Ա

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-327-8.06.2018-ՊԻՄԻ-011/0) քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հուլիսի 10
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-327-08.06.2018-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-110-Ն քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասը «դատական ծախսերի հատուցման պարտականությունը դնում է պատասխանողի վրա:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ.

«Ընդ որում դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածով կամ 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների գումարի չափը փաստացի հաշվարկում է պատասխանողի կողմից հայցապահանջը ամբողջությամբ կատարելու օրվա դրությամբ և այդ պահից սկսած մինչև դատարանի վճիռ կայացնելը պատասխանողի նկատմամբ որևէ տույժ կամ տուգանք չի կարող հաշվարկվել:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Համաձայն 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված և գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի քաղաքացիական գործի քննության ընթացքում պատասխանողի կողմից հայցապահանջները կամավոր կատարելու հետևանքով գործի վարույթը կարճվելու դեպքում դատարանը դատական ծախսերի հատուցման պարտականությունը դնում է պատասխանողի վրա: Սույն օրենսգրքով՝ դրամական պահանջներով հայց ներկայացնելու համար դատական ծախսերի մաս կազմող պետական տուրքի չափը որոշվում է հայցագնի հիման վրա, որի մեջ մտնում են նաև պահանջվող տուժանքի (տուգանքի, տույժի) և տոկոսների գումարները: Սակայն սույն օրենքով չի հստակեցվում տուժանքի և տոկոսների հաշվարկման ժամկետները, դրանք սահմանվում են ստորադաս իրավական ակտով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի թիվ 129 որոշմամբ, որով դատարանը հաշվարկում է վերը նշած տուժանքներն ու տոկոսները դատարանի վերջնական դատական ակտ կայացնելու օրվա դրությամբ: Ինչպես հայտնի է մեր դատական պրակտիկայում դատական գործերը դատարաններում կարող են քննվել ամիսներով ու տարիներով, և վերջնական դատական ակտը կարող է կայացվել քաղաքացու, նույն ինքը պատասխանողի կողմից, հայցապահանջը ամբողջությամբ կատարելու օրվանից հետո մի քանի ամիս անց միայն: Այդ պատճառով առաջարկում եմ նախ վերադաս իրավական ակտով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ամրագրել տուժանքի և տոկոսների հաշվարկման ժամկետները, ինչպես նաև ազատել քաղաքացուն (պատասխանողին) անիմաստ և ոչ օբյեկտիվ գործոններով պայմանավորված լրացուցիչ գումարների վճարումից: